

551.48

Ճ-43

Հ. Ա. Խ. Հ.

ԿԱՆ ԳԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

V

թ. ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

ԻՆՉՈՒ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ ԶՐԵՐԸ

(Հայուսանի Զեգացության ծախըն)

Յ Ե Ր Ե Գ Ո Ւ Շ

1928

12047  
20.06.2013

12047

Հ. Ա. Խ. Հ.

20 JUL 2010

ԿԵՆՅԱՐՈՒՍԱԿԱՆ ԳԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՔԸ

V

51.48

8-43

թ. չգնավորչան

ԱՆ

ԻՆՉՈՒ ՑԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏք Ե  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ ԶՐԵՐԸ

1965/1

1003  
13961

(Հայաստանի Հրապարական ծախին)



ՕՓՈՏ ՅՈՒ 02

ՀԱՅՈՒԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՄԱՐԱՆ  
ԳՐԱԲ. 1028 Բ.  
ՊԱՏՎԵՐ 4966. ՏԵՐԱԺ 800)

Դեռ շատ հին ժամանակներից մարդկությունը ջուրը սգտագործում է զանազան նպատակներով, ի միջի այլոց նաև սոցիալ-տնտեսական նպատակով՝ վորպես հաղորդակցութեան հարմար և հժան ճանապարհ, վորպես շարժիչ ու և վերջապես վորպես վուսոգով առուների ոպնությամբ արտերին խոնավություն հայթայթելու. միջոց։ Սակայն՝ չը նայած ամեն լերկրի կլանքի մեջ զետերի, լճերի և ծովերի ունեցած տհագին նշանակությանը՝ առանձին զավառների և շրջանների ջրերը մինչեւ այսօր ել զետար քիչ են, իսկ լերբեմն ել բոլորովին չեն ուսումնասիրված։

Ջրային անտեսության կարևորությունը մեծ և հայաստանում։ Հայաստանի հարավային մասի գրեթե բոլոր հողերը չսրացին են և կարող են սղտագործվել միայն արհեստական կերպով վասոգվելով։ Մյուս կողմից՝ լերկրի նպատակոր տեղագրական պարմաններն և սելեֆը թույլ են տալիս սղտագործելու ջրային հարստությունները նաև ուժատու կառուցվածքների համար։

Հսուն ջրերի, լճերի և ծովերի ուսումնասիրության ընդհանությ գիտական զեկավարությունը եւ. Միության մեջ կենտրոնանում և Համամիու-

թենական Պետական Զրաբանական ինստիտուտի ձեռքին, իսկ աշխատանքներտեղերում կատարվում են զանազան հիմնարկների և կազմակերպությունների միջոցով։ Մասնավորապես մեզ մոտ, Հայաստանում, այդ պարտականությունը դրված է Հայաստան Զրաբանության Գիտական Հետազոտական Բաժնի վրա, վորփ կազմի մեջ են գտնվում Զրաչափությունը, լերկարաբանական լենթաբաժինը և Սևանա լճի Զրաբերկարանական Բյուրոն։ Զրային հարստությունից ուցիունալ կերպով ոգտվելու համար, լինի դաժենիորատիվ, թե ուժ ստանալու, թե այլ նպատակով, անհրաժեշտ է ջրային ավազանների ուժիմի բազմակողմանի ուսումնասիրություն։ Դամի մեծ և բարդ աշխատանք է, վոր պահանջում է տեղադրական չափումներ, գետերի ավազանների լերկարանական ուսումնասիրություն, հողադիտություն և այլն։

Սակայն ինչքան ել ուժեղ լինի այդ բարդ աշխատանքը կատարող մասնագիտական հիմնարկի կազմակերպությունը, սակայն նաև անկարող կլինի այդ աշխատանքը լիսակատար ծավալով սպառել չպետք է մոռանալ, վոր նույնիսկ ամենահոգեկու գետը վերջ ի վերջո կազմվում է փոքրիկ վտակներից և աղբյուրներից, իսկ բոլոր այդ մանր վըտակների և աղբյուրների դիտողությունն ամեն կազմակերպության ուժից վեր է։ Այդ պատճառով այդ ահազին կարենություն ունեցող աշխատանքներին ամեն մի քաղաքացու մասնակցությունը թեկուզ և ամենափոքր չափերով՝ ըստ ա-

մենայնի վողջունելի յի, վորովհետեւ առանձին քաղաքացիների հազորդած տեղեկությունները հարավորություն են տալիս բացերը լրացնելու և նյութը ճշտելու և սպազմություն։ Այս հանդամանքը աչքի առաջ ունենալով՝ գավառագիտական կազմակերպություններն իրենց ծրագիրների մեջ մտցնում են նաև շրջանի ջրերի ուսումնասիրությունը և այդ նպատակների իրականացման համար աեղական բնակիչներից առաջ են քաշում կամացոր թղթակիցներ և հիմնում են դիտողական պունիտեր, կետեր՝ տալով նրանց համապատասխան հբահանդներ, անկետաներ, հուշատերեր և այլն։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՌՈՒՏ ԶՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի բոլոր գետերը պատկանում են Անդրկովկասի յերկու ամենամեծ գետերի ավազանների մասերին — Կուրի և Արաքսի։ Կուրի ավազանին են պատկանում գետի հյուսիս և հյուսիսարեկելք հոսող գետերը, այն են 1. Փամբակ գետը, վորը ձախ կողմից Զորագետ ընդունելուց հետո ստանում է Դեբեդ գետ (կամ Դեբեդ-չայ) սնունը, և 2. Աղստաֆ գետը իր թարս-չայ սժանդակով։ Հանրապետության սահմանը գծով Արաքս գետի սիստեմին են վերաբերում գետի հարավ և հարավ-արևելք վազով գետերը. նրանցից ամենախոչըներն են. 1. Արեմյան Արփաչայ կամ Ախուրյան, 2. Սեղուր Քասախով, 3. Հրազդան (Զանգի) Սևանա լճի ավազանով, 4. Գառնի գետ (Գառնի-չայ), 5. Վեդի

գետ, 6. Արևելյան Արփաշայ, 7. Ոխչի-շալ և 8. Բազգաբ-շայ Գորիսի գետ ոժանդակով:

Թված գետերից յուրաքանչյուրն ունի մի շարք ոժանդակներ, վորոնց մեջ՝ իրենց հերթին՝ թափվում են ավելի մասք ոժանդակներ և այլն: Այդ ոժանդակների ամբազջությունը զետի հետ կազմում է առանձին ավազան: մի ավազան մյուսից բաժանվում է ջրբաժան գծով:

Հայաստանի կյանքի մեջ ամենից ավելի կարևորություն ունի Հրազդանի ավազանը Սևանա լճի հետ—յերկրի այդ հոկայական բնական ջրամբարի հետ: Ինքը Սևանա լիճը համաշխարհային մասշատաբ ներկայացնում է բացառիկ յերեսութ, վորպիս «ամենամեծը բարձրագիր լճերի մեջ և ամենաբարձրագիրը մեծ լճերի մեջ»: Հաճախ խթնդիր է գրվել Սևանա ջրերի ողազործելու, սակայն միշտ ել արգելք և հանդիսացել նրա չուսումնասիրիված լինելը: Այժմ այդ լճի ուսումնասիրությունն առաջ է տանում Պետական Զքարտանական ինստիտուտի զեկավարությամբ Հայ Զըրքարչության Զբուրերեւութարանական Բյուրոն: Բայց նույնիսկ աշխատանքների այսպիսի հիմնավոր և լուրջ կազմակերպություն ունենալով հանդերձ՝ այդ լճի ավազանում ապրող յուրաքանչյուրը քաղաքացու, թեկուզ և ամենափոքր չափերով մասնակցությունը կարող է մեծ ողուտներ ընթալ: Մենք կանգ չենք առնի մանրամասնորեն ամեն առանձին ավազանի բնութագրման վրա, այլ կը սահմանափակի միայն համառոտ տեսությամբ:

Հայաստանի գետերը, Արաքսի բացառությամբ, չեն կարելի հորդահոս անվանել: Բոլորն են ինոնային գետեր են՝ մեծ անկումնավոր: Մեծ փոփոխություններին յենթակա գետահունները հաճախ ձեւափխուում են յերկար արածության վրա, մանավանդ դարնահային ջրերից կամ անձրեային հեղեղների անցնելուց հետո: Այս հանդամանքը շատ է դժվարացնում նրանց ոեժիմի ուսումնասիրությունը: Գետերին սնունդ են տալիս զլիավորապիս աղբյուրները. նրանց ոեժիմի ուսումնասիրության ժամանակ պետք է հաշվի առնել նաև սոսորերկրյա ջրերի ահագին նշանակությունը, ուստի վերջիններիս գիտողություններին ևս հերթական խնդիր են դառնում զավառադիտական կազմակերպությունների համար:

Հայջրպարչության Զքաշափական յենթարաժինը բոլոր թված գետերի և նրանց նշանավոր ոժանդակներից մի քանիսի վրա ունի ջրաչափական կայաններ: Այդ կայաններում զիտողները ջրերի մակերեսութիւնի նիշերն են զրանցում, այլտեղ են տարենը մի քանի տնտես նաև չափում հատուկ զործիքների ողնությամբ ժամանակի մի միավորի (այսինքն մի վայրկյանի) բնթացքում հոսող ջրի քանակը:

Զքաշափական կայանների թիվը 1924 թվից մինչև 1928 թիվը տասից աճել է մինչեւ քառասուն, և չնայած այդ կայանների ցանցի այսպիսի լարմագարման՝ այնուամենայնիվ Հայջրպարչության Զքաշափական յենթարաժինը հնարավորություն չունի ամրող ավազանը ընդգրկելու. կայանները

կառավորված են միայն բնորոշ տեղերում, և այդ  
և պատճառը, վոր կրկին անգամ սախզված ենք  
բնգգծել, վոր ամեն մի տեղացու մասնակցությու-  
նը, թեկուզ և պատահական գրանցումներ կատա-  
րելով նույն այդ ջրաչափական կայաններում և նր-  
շանակելով գրանցման ժամանակը, եյական ոժուն-  
դակություն կլինի յերկրի ջրարանության ուսում-  
նասիրության համար :

## ԻՆՉՈՎ ԿԱՐՈՇ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՅԻՐԿՐԻ ԶՐԱ- ԶԱՓՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԵԱՆԸ ԹԸՂ- ԹԱԿԻՑՆԵՐԸ ՈՒ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ- ԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նա, ով վոր կամէնում և մասնակցել ջրերի  
ուսումնասիրության աշխատանքներին այն չո-  
փակ, ինչ չափավ վոր նպատակ են գրել Գավա-  
ռադիտական ընկերությունները, բոլորին պիտք  
չունի մասնագիտական նախապատրաստու-  
թյան բաժական և վոր ծանօթանա և յուրացնի  
ստորև բերված համտուա, հանրամատչելի չր-  
բահանդները:

Գավառագետ թղթակիցները կարող են սահ-  
մանափակվել միայն անկետաներ և տեղեկատու-  
ներ լցնելով և ըստ հացեյի ուղարկելով. այդ  
անկետաները և տեղեկատուները կենտրոնում  
սիստեմի յենթարկվելով և մշակվելով՝ կոժան-  
դակեն ստուգելու և լրացնելու յերկրի ջրարա-  
նության վերաբերյալ տվյալները:

## ԻՆՉՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԳԵՏԵՐԸ

Գետերի ուսումնասիրության համար անհր-  
բաժեշտ և նախ և առաջ զիտենալ նրա ջրագրու-  
թյունը, այսինքն՝ վարուչի նրա աշխարհագրա-  
կան գերքը ակունքից (սկզբից) մինչև բերանը  
և վորոշել նրա ավազանն ու ջրաժամանը։ Այս  
աշխատանքը կատարվում և ձեռքի տակ ունե-  
նալով յեղած քարտեզներն ու պլանները—վոր-  
պես ընդհանուր, նույնպես և տեղական, վոր  
գանգում են տեղական պետական հիմնարկների  
մաս (որինակ Հաղողովկոմաում և նրա բաժան-  
մունքներում)։ Եքսկուրսուիների միջոցավ և  
այդ քարտեզները ձեռքի տակ ունենալով ցան-  
կալի յի հետազոտել յուրաքանչյուր գետի ավա-  
զանը. այդ աշխատանքը պիտի հաջորդաբար  
տարիի, վորքիկ ըքչաններով, սկսած ակունքից  
և մեկ ըքչանը մյուսի հետ կապելով։ Ակունքից  
հոսանքով վար ընթանալով՝ անհրաժեշտ և զաշ-  
տային որադրի մեջ նշանակել յեղերի բարձրու-  
թյունն ու վիճակը (ողողվածությունը), զետի  
ոլորները, նրա րայնությունը, խորությունը և  
թեքումը վորոշ հետազոտաթյունների վրա և  
ընթուշ տեղերում նշանակել յուրաքանչյուր ո-  
ժանակը, վատակը, աղբյուրը, խմանալ բնակիչ-  
ներից նրանց տեղական անունները՝ ստուգելով  
բարտեղի վրայի անունները (յեթե նրանք մա-  
կադրված են)։ Զափաղանց ցանկալի յի գետի  
րայնությունն ու խորությունն չափելու ժամա-  
նուկ չափել նաև հոսանքի արագությունը, թե-


կուզ լողնակների սպնությամբ : Պետք է նշանակել նաև հատակի խորացումները , ջրվեժները , քարալազները , կղզիները , ծանծաղուաները , առմեն տեսակ արհեստական կառուցվածքները , ինչպես որինակ՝ թումբերը , ասուները , ջաղացները , կամուրջները և այլն : Նման հետախուզությունները պետք է կատարել զետի բարոր սժանդակներով : Գետի այսպիսի հետախուզության միջոցին հարկավոր է ի հարկե կատարել և առողութափիկ (աեղագրական) հանումներ , բայց սա պահանջում է մեծ միջացներ , մի բան , վոր գեր չունեն մեր գավառագիտական կազմակերպությունները : Ուստի կարելի յե հանձնաբարել աչքաշափությամբ տեղի պատկերը հանել՝ բուռովի և աներայիտի (բարձրաշափի) սպնության դիմելով : Այս ձեռք ստացված պլանին կցել մանրամասն մեկնարանություն :

Գետի ավաղանի ջրագրական հետախուզության հետ զուգընթացար անհրաժեշտ է առամբանաբերել նաև զետի ու նրա սժանդակների սեծիմը և նախ և առաջ մակերեսութի տառանումները : Այս նպատակով զավառապիտական եքսպլիցիան ստացինար զիտալություններ և կազմակերպում՝ ջրաշափական կարաններ սարքելով զետի ընորու կետերում :

Ինքնըսակնքյան հասկանալի յե , վոր նման զավառապիտական եքսկուրսիաները պիտի միշտ զողվեն աեղական ազգաբնակության հետ և հարցութարձերով պիտի պարզեն թե ջրերը ինչ

բարձր և ցածր մակերեսությունը են ունենում , ինչ բացառիկ բարձր հորիզոններ վարարման ժամանակ , յե՞րբ և այլն : Պետք է բացատրել աեղական բնակիչներին կատարվող հետազոտությունների նշանակությունը և մտանակից անել նրանց այդ աշխատանքներին՝ համապատասխան հրահանգներ տալով : Ցանկալի յե և նպատակահարմար ջրաշափական կայանները հանձնել աեղական բնակիչների միջից նոր բնարած թրդթակիցներին :

Ջրաշափական կայանի ընարսություն ժամանակ պետք է հետեւալը աչքի առաջ ունենալ . պետք է վերցնել գետի պիտի կամ պակաս ուղիղ մասը , վորտեղ չունը չունի հանկարծակի խորություններ և ոլորտներ , հոսանքը ընթանում և զուգահեռ շիթերով՝ առանց զանդադանալու և արագանալու և չի նկատվում վտափիւգող ձնչման ազգեցությունը . վերջին հանգամանքը՝ յեթե վերացված չե , կարող է աղավազել զետի խոկական ընութագրումը : Ուստի անհրաժեշտ է նախորոք ուշագրսությամբ հետազոտել զետի այդ մարդ—արդյոք առջեկից չկոն քանդովի թումբեր , ժամանակավոր քարակուլեր չուրը զետի առուն մղելու համար կամ լուզանալու համար լճացնող պատճեններ , արդյոք չի ազգում մի այլ , հարեւն վտակ (յեթե գա կա) իր հորիզոնի բարձրանալու միջոցին —և ապա կայանը հարդարել :




Նկ. № 1. Զբաշափական ձող - ՓՄԱՏՈԿ.

Կայանի ամենապարզ և ամենահարժար տիպն է՝ ձողավորը (reeechnyi): Զբաշափական ձողը (ՓՄԱՏՈԿ) բաժանված է մերձիրի և սահմանաբերերի սղիտակի և սե ներկերով. նու ամբացվում է՝ նայելով տեղին՝ կամ ցցված և հաստատուն սյունին, կամ ուղղահայց յեզրի ժայռին: կամ կամուրջի վոտին, այնպես, վոր նրա զերո զիծը չմերկանա ամենացածր ջրերի ժամանակի, իսկ ձողի յերկարությունը պիտի այնքան լինի, վոր

չծածկվի բարձր ջրերի ժամանակ: Զողը հաստատելուց հետո գետափին ընտրում են մշտական կետ (քարաշեն տան պատը, կամուրջի ծունկը, ժայռի գլխին հրապարակը). այդտեղ կամ զիծ են փորագրում կամ գետնի մէջ հատուկ սյուն են տնկում և ցեմենտով պնդացնում: Այդ կետը կոչվում է կայանի սեպեր: Յեթե կամուակայքում մի կետ, վորտեղ ծովի մակերեսիութից ունեցած բացարձակ բարձրության նըշանն է (գենչտարի նշան) գրված, սեպերի բարձրությանը կապվում է նրա հետ. յեթե չկա՝ զնում են սպայմանական նշան կլոր թվերով, որինակ 20 մետր: Հարթաչափի սղնությամբ վորոշում են ջրաչփական ձողի (Փուտշտոկի) զերո զծի զրությունը սեպերի համեմատությամբ, այսինքն՝ թիվ վորքան սեպերը բարձր է ձողի զերոյից: Ֆուտշտոկի զերոն ժամանակ առ ժամանակ պետք է սոսուգել այդ մշտական սեպերի սղնությամբ, մասնավանդ սառուցների անցնելուց կամ մեծ հեղեղություններից հետո, յերբ ձողը կարող է պոկված կամ տեղափոխված լինել:

Այդ ջրաչփական ձողի ցուցմունքները կանոնավոր կերպով տարիների ընթացքում դրի առնելով՝ կունենանք չափազանց արժեքավոր նյութ զետի կյանքի մտսին գաղափար կազմելու համար, իսկ ստացված ավյալների մշակումը կտա գործնական տեսակետով կարենը և հետաքրքրական յեղբակացություններ, վորոնք կդարձնեն զանազան կառուցվածքների նախագըծումը, որինակ՝ շարժիչ ուժ ստանալու նպա-



տակով ջրի անկումը ողագործելու նախագիծը  
կազմելիս։ Այսպիսի գիտակաթյունների բացա-  
կայությունը ներկայաւում լուրջ արգելք և հա-  
զարդանում երեկորական կառուցվածքների նա-  
խագծման ժամանակ։

Բայց մակերեսույթի տառանումները վրա-  
չելուց, մեծ նշանակություն ունի պարզել զետի  
«ծախորը»՝ այսինքն թե ինչքան ջուր և անցնում  
ժամանակի մեկ միավորի, որինակ՝ մեկ վայր-  
կանի ընթացքում գետի հունով, կամ ինչպես  
տում են՝ «գետի կենդանի հատումով» (ըստու)

Դրա համար կայանում չինվում և մշտական  
աշխատանքային փեղկ։

Այս նպատակով նախ լոկնակներով (ՈՈԱՎԵԿ  
—ջրի յերեսին լուրջով փայտի, տաշեղի, խցանի  
կամ այլ իրերի հավասար փոքրիկ կոտորներ) վո-  
րոշում են հոսանքի շիթերի ուղղությունը և զե-  
տի մեկ ափից զետի մյուսը այլ շիթերին ուղղու-  
հայաց՝ (ցանկալի յե վոր ջրաշտիւական ձողը  
լինի այս գծի վրա) ձգում են ձյութած պարան։  
Այս և այն ափին հաստատվում են կետեր՝ զետնի  
մեջ ցցեր ցցելով կամ ժայռերին խազեր նշելով,  
այսպես վոր ամենալարածը ջրերին նրանք շծած-  
կվեն, այլ կետերից մեկը ընդունվում է վոր-  
պես մշտական յելակետ, և նրանից են յենում  
բոլոր աշխատանքները։

Այդ աշխատանքային փեղկից հոսանքով  
վեր և վար ձգում են զետի վրայով յերկրորդ և  
յերրորդ պարանները (մեր զետերի համար 20-30  
մետր հեռավորության վրա), կամ այդ տարա-

ծությունները վորեկ ուրիշ յեղանակով են նշանակում։ Այդ հեռավորությունները պետք ե ճիշտ չափաված լինեն։ Այնուհետև ճիշտ վորոշում են խորությունները աշխատանքային փեղկի զծի վրա. դրա համար չափում են հեռավորությունները մշտական յեղակետից մինչեւ ջրի յեղը և այնուհետև հավասար՝ ամեն մի ½—1 կամ 2 մետրի վրա ջրի ունեցած խորությունը չափել շարժական ֆուտշոլկով<sup>\*</sup>)։ ամեն անպատճիթի վրա նշանակվում է թե մշտական յեղակետից ինչ հեռավորության վրա յև չափաված խորությունը (չպետք ե մոռանալ նշանակել թե վո՞ր ափին ե գտնվում մշտական յեղակետը)։ Այսպիսով կարելի յե գտնել «կենդանի հատման» (ՀԻՅՕԵ սեւ ԲԻ) մակարդակը (ԱՅՕԹԱԾ)

Հոսանքի արագությունը չափում են կամ հատուկ զործիքներով, կամ լողնակներով. վերջին աշխատանքը կարող է կատարել և վոչ մասնագետը։ Յերեք աշխատող պիտի լինի։ Մեկը կանգնում է վերիի, մյուսը մեջտեղի, յերրորդը ներքեւի փեղկի մոտ։ Առաջնը ձգում է լողնակը և նշան ե տալիս, հենց վոր լողնակը անցնում է իր փեղկի գծով. յերբ լողնակն համառում է յերրորդ փեղկի գծին, այնտեղ կանգնած գիտողն ել նշան ե տալիս («Հոսդ» կանչով կամ ոյլ յեղանակով), իսկ մեջտեղ կանգնածը հետևում


\*) Ֆուտարկի տակի ծայրին պիտի տափակ տախտակ ամրացրած լինի վոր հատակի մեջ ըը խրվի։ Կանգնեցնել նեղ կողով գեպի հոսանքը, վոր ջրի հոսանքի զարկը պակաս լինի։

է ժամացույցի վայրկենական ուղաքին<sup>\*)</sup>։ և արդարես վորոշում է լողնակի տուաջին փեղկից մինչեւ յերրորդ փեղկը անցնելու ժամանակամիջոցը։ Փորձը կրկնվում է մի քանի անգամ, և այնպես վոր լողնակները անցնեն գլխավոր փեղկի և մեջտեղով, և յեղբերի մոտեքով։ Գիտենալով վերեկի և ներքեւի փեղկերի հեռավորությունը և լողնակի անցած ժամանակամիջոցը՝ հեշտ և հաշվել գետի արագությունը։ Բոլոր ստացած արագությունների միջինը կկազմի միջին մակերեսային արագությունը։ Ունենալով այդ արագությունն ու «կենդանի հատումի» մակարդակը՝ դժվար չե գտնել «ջրի ծափքը», այսինքն թե մեկ վայրկանում ինչքան ջուր և անցնում գլխավոր փեղը միջով։


Քղթակիցը կարող է ինքը տեղն ու տեղը չկատարել հաշիվը—նա կարող է դրել զիտուության որը և ժամը, ջրաչափական ձողի ցուցմունքը ջրի մակերեսութիւն մասին, խորությունները—ցույց տալով նրանց հեռավորությունը մշտական յեղակետից, ճանապարհի յերկարությունը մետրերով և լողնակի վաղքի ժամանակամիջոցը՝ նշելով «գետի մեջտեղ», «աջ ափին», «ձախ ափին»—և այս ավյալների հիման վրա հաշիվը կարող են անել կենտրոնում մասնաւեները։

Ճանազան մակերեսությների ժամանակ մի վայրկանում անցնող ջրի քանակը վորոշող մի

\*) Կան հատուկ վայրկենաչափեր վրանց գրադարձը կարելի յե ուղած ժամանակ բաց թղթնել և կանգնեցնել։




քանի ազգպիսի ուշխառանքներ. թույլ են տայիս չայտնաբերելու այն կախումը, վոր կա այդ դետի ջրի ծափքի և ջրաչափական ձողի (Փուտաչակի) ցուցմունքների միջին : Ցանցավոր զծած թղթի վրա նշանակելով մի ուղղությամբ մակերեսու թղթների ցուցմունքները, մյուս ուղղությամբ որպէս մակերեսու թղթներին Համապատասխանուած չեն ծափքի մակերեսը, մենք կրտսեանք «Ճախքի կորագիծը» (ԿՐՈՎԱՅ) : Գիտենալով մակերեսու թղթի և ծափքի միջին լեզած կախումը՝ կարելի յի գետի ծափքը վարուել՝ բացառապես նայելով միայն ձողի ցուցմունքն : Այսպիսով հարավոր և չաշփել ջրի որական, ամսական և տարեկան ծափքը այդ ուղղում :



Նկ. № 3. Պատկան—վերտուշկա.

Արագությունների ավելի ճիշտ վարուսմը կատարվում և վոչ թե լողակներով, այլ համարկ զործիքներով, վարոնց մեջ ամենից ավելի

ասրածված են պատկան (ՎԵՐՏՈՒՇԿԱ) և բաժնմետրը: Սրանց ողնությամբ կարելի յի շափել ջրի հասանքի արագությունը վոչ միանմակերեսին, այլ և զանազան խորությունները: Վեամբի բան, վոր հարավորություն և տալիս ավելի ճիշտ վարուչելու անցնող ջրի քանակությունը ժամանակի մասունքի միավորի ընթացքում: Այս անեղ մեր նպատակը չենկարագրել այդ զործիքները և թե ինչպիս են նրանց զործածում, կառանքը միայն վոր համարկ նախապատրաստություն չունեցող անձանց համար ամենից ավելի մատչելին և պրոֆ. Վ. Գ. Գլուշկովի բաթոմետրախիմետրի զործածությունը, վորը և՛ պարզ կարգություն ունի, և՛ զործածության պարզ մեթոդներ, և աժան և (մոտ 12-20 սուրլի) :



Նկ. № 4. Պրոֆ. Վ. Գլուշկովի բաթոմետր—ասրածվածը.

Պրոֆ. Վ. Գ. Գլուշկովի բաթոմետր—ասրածվածը կազմված և ռեալինե գնդակից և վարութագիծ ունեցող մետաղե խոզովակից: Այս զործիքը ամրացնում են ձողին այնպես, վոր խոզովակը լինի նրան ուղղահայաց և ձողի ներքել ծայրից այնքան հեռու, վոր ձողը մինչեւ գետի հատակը խորասուղելին՝ խոզովակը սուզված

մինի ցանեկացած խորության վրա : Բաթոմնետքը («խորաչափ») սուզում են ջրի մէջ՝ պահելով խողովակի բերանը հոսանքով վար ուղղությամբ : Յերբ բաթոմնետքը իջեցրած և լինում մինչեւ ցանեկայի խորությունը, ձողը չուռ են տալիս, այնպես վոր խողովակի բերանը լինի հոսանքի դիմաց, և միաժամանակ բաց են թողնում ուկունգոմնետքը (վայրկենաշափիը) : Մի վորոշ ժամանակամիջոց (նայելով՝ արագությանը, մեկ-յերկու բոսկ) այսպիս պահելուց հետո՝ արագ շարժումով ձողը չուռ են տալիս՝ այնպես վոր խողովակը համակին գրությանը վերադառնա, անմիջապես կանգնեցնում են վայրկենաշափիը և հանում բաթոմնետքը ջրից : Գնդակի մեջ հավաքված ջուրը ածում են առաջնահավաքված (չափերի խաղեր ունեցող) բաժակի մեջ, և այդպիսով վարուսում են քանակությունը խորանարդ սանտիմետրերով :

Նշանակելով թե կեար վորչափ հետո յեցրի մշտական յելակետից և ինչ խորության վրա յլ, նույնական և ջրի քանակությունը և վայրկենաշափի ցույց տված ժամանակամիջոցը՝ արդեն հարավոր կլինի հաշվել ջրի արագությունը այդ կետում :

Որինակ՝ նկ, 2-ի վրա այդ կետը ցույց և տրված խաչիկով : Այդ կետի զիրքը կդրանցմի այսպես :

Մշտական յելակետից—7,00 մետր  
սուզման խորությունը—0,30 մետր

Ղրի քանակությունը—590 խոր, սանտիմ .  
ժամանակամիջոցը—100 վայրկյան :

Եակայն ավելի կամ պակաս վատահելի տրվայալներ ունենալու համար հարկավոր ե գետի ուժիմը զիտել մի քանի տարի և այն ել նկատի առնել վոչ միայն վաղող ջրի մակերեսությն ու քանակը, այլ նույնպես նրա վիճակը, այն ե՝ Ջրի վրա լողացող սառուցի յերեալու ժամանակը, սառուցի հաստությունը, սառուցից աղատվելու ժամանակը, ջրի պղարությունը, գետի բերած տիզմի, ավաղի, քարերի քանակին ու տեղափորումը և այլն, և միայն այսպիսի հանգամանորեն և յերկարատե ուսումնասիրությունից հետո կարելի յե խոսել դետի ուժիմի մասին :

Պետք ե չաղկապել ջրաբանական և ողերեւութաբանական գիտողությունները իրար հետո : Աղերեւութաբանական կայաններում անձրեւչտափակ ստացած ալյաները հիմք են ծառայում վորոշելու ավյալ գետի ավագանի մթնոլորտային տեղումների քանակը ըստ ամիսների և տարեկան, իսկ ջրաշափական տվյալները ցույց կտան թե տեղումների այդ քանակից վա՞րքան և անցել գետի հունով : Անցնող ջրի քանակը մանավանդ մեծ և լինում գարնանը, յերբ հարվում և ձյունը . չատ հետաքրքրական և հաշվել թե ավագանութեմնովա ընթացքում իջած ձյունի սպազմը (հաշվում և ողերեւութաբանական կայանը) ջրից ինչքան և անցել գետովը :

## ԿԱՆԳՆԱԾ ԶՐԵՐ

Լճերի, ձահիճների և այլ կանգնած ջրերի տառմասիքության համար ել ցանկալիք յե ունենայ զափառապեսների հետախուզություններով հափառած նախնական ջրադրական տեղեկությունները։ Գալվառապեսները տեղերում կարող են դիմել միայն լճերի մակերեսությունների տառահամեմները, իսկ ներս թափվող և զուրս հոսող զետակներն ու վասկները հետազոտվում են հայտն մեթոդներով, ինչ վոր դեմերը։

Բացի Սևանա լճից մենք լճեր ունենք Արագածի լանջերին, ևսում և այլ վայրերում։ Յանկալիք յե նկարագրել նրանց տեղագրությունն և ձերը, ինչպես և յեզրերը, գոնի աշքաշափով հանել նրանց պլանը, չափել խորությունները և գծել հասպածաղերը նրանց բոնած վասի ձեր մասին գաղափար կազմելու համար, սպարզել թե ինչ տեսակ ջուր ունեն—քաղցրահամ և թե աղի, չոռ, զանազան հանքային տարրերի հետ խառնված, ինչ տեսակի պրատորություն, հատակի հողը ինչ տեսակի հող և (հանել նմուշներ գույլերով կամ ուղարկածիկ), վորոշել՝ ինչ վասակներ և պղյուրեներ են լճերի մեջ թափման և ինչ վասակներ նըրանցից ըզբում, պարզել թե ինչ նպաստակներով և ինչ չափով են նրանք ոզտագործվում տնտեսական պետքերի համար։ Գալվառապեսը կարող է նույնականացնել համապես և աղյուսակի լարությունը լճի անցյալի մասին՝ նայելով յեզրերի ծալաներին կիջածքներին, վարոնք ցույց են տալիս լճի բոնած նախակին տարածությունը։ Միաժամանակ անհրաժեշտ է պլանի

վրա նշանակել նախկին յեզրերի այլ հետաքերը և փարձել լուսարանել առաջացած վազփոխությունների պատճառները։ Վերջապես կարելի յե հայտնաբերել թե լիճը այժմ ինչ ուղղությամբ և փոփոխում—մեծանում և թե ցամաքում—եւ ինչից, վտակների բերած տիղմից և ավազից թե այլ պատճառով։ Առհանարակ պետք և կանանցոր հետեւ լճերի կրանքին—նրանց մակերեսով բարձրանալուն և իջնելուն ասրագ զանազան լիզանակներին, ինչպես և ջրի բարեխառնության յիշենջներին։ Այս ամեն աշխատանքները դուլասպեսի ուժից չեն, միայն լճի ջրի բարձրությունն և հողի բնույթը վրասչելու համար նա հարկադրված կլինի նմուշները ուղարկել մասնագիտական հիմնարկ վերաւետման համար։

Գալուզ հահիններին՝ պետք և առենք վոր վրանք Հայաստանում այնքան մեծ տարածություն չեն բանում, վորքան սրինակ թուսատանում։ Ղամարլուի ձահիճները արդեն ցամաքցրած են. իսկ Արագոյանի, Զանգլիաստրի և Սև-Զուրի ձահիճները յենթարկվում են մասնագետների մանրագնին հետազոտությանը և յերեի նույնություն կարձ ժամանակամիջոցում ցամաքեցրած կլինեն և վարելահոգերի վերածված։

Գետերի, լճերի և ձահիճների մեջ ապրող բույսերի և կենդանիների ուսումնասիրությունը նույնական կարելու և հետաքրքրական աշխատանք և, առկայն զա զուտ ջրաշափական հետափառություններին չի վերաբերում և այլ զետություններին և հատկապես վերապահվում։

ԱՏՈՐՅԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ

Վերը արդեն ասացինք, զոր չափականց կտրեալ և նաև ստորյերկրյա ջրերի ուսումնասիրությանը:

Այդ ջրերի նշանակությունը չափազանց մեծ է։ Երանք ջրմասակարարության գլխավոր աղբյուրներն են և սննդանոց են տալիս վասակներին, գետերին, լճերին, ձահձններին, խոնավացնում են գետինք և այլն։ «Շենք կառուցանելիս գործ ենք ունենում ստորաբարկոյա ջրերի հետ։ Հանքավայրերում ահազին զուժարներ ենք վատանում գետնից ջրերը հեռացնելու համար։ Յերկաթուղի շննելիս ջրատար յերակները ահազին աշխատանքներ են պահանջում։ Ստորաբարկոյա ջրերը առաջ են բերում գետնի սոթանքներ (օվոլան)։ Հողերի մելիքորացխայի (լավացման) համար աշշի առաջ պետք է ունենալ թե՛ ստորաբարկոյա ջրերը վո՞րչափ խորն են անցնում։ Պատահարար վորված թրհուրը կոմք քաշը նոր կենդանություն է տալիս չոր տեղին և անապատը դարձնում է հարուստ սագիս։ Վերջապես մի շաբաթ հանքամին ջրեր տալիս են մարգուն բուժվելու միջոցներ և փրկում են նրան բազմաթիվ, հաճախ չափ հացած ակարտություններից»։ (Մ. Սովորան)

Գալաքսիաը այսուեղ շատ բան ունի անելու :  
Եափ և պուած պետք է հաշվառնել տեղի բարի  
քրիորիները, և յեթե Հնարավոր է, կազմել նրանց  
գասավորության ընդհանուր քարտեզն և առանձին  
պլանները : Այս պետք է նշանակել թիւ վու բարեգ և

գտնվում ջրհորը (ցածրության վրա, լանջին թե սարի վրա), հողի ի՞նչ չերտից և ջուրը ծծվում ջրհորի մէջ (ավազաքար, կրաքար, խիճ, լեփուկ), ի՞նչ խորություն ունի ջրհորը (մինչեւ ջրի յերեսը, մինչեւ հասակը), ի՞նչ հատկություն ունի ջուրը (պղտորությունը, համը, հոտը), վո՞ր ամիսներին ջուրը աղելանում է և վո՞ր ամիսներին պահառում . նկատմէլ են արդյոք գեղքեր, վոր բոլորովին ցամաքի, վո՞ր թվականին եր այդ և ի՞նչ հանգամանքների մեջ: Վո՞ր թվականին և յեղեւ ամենացածր ջուրը:

Յանկալի յև զիտել ամեն որ ջրհորի ջրի մակերսութիւն առանուածը՝ համեմատելով ջրհորի լեզրին կամ պատին ամբացած մշտական ռեզերվի (նշանի) հետ :

Գալվանագետի մյուս գործը պիտի լինի աղ-  
բյալբների ուսումնասիրությունը: Այսին աղբյու-  
թի մասին աեղեկություն տալ լիւքի (ակի) դասա-  
վորության և բնայթի, ջրի բցիւելու ուժի, ջրի  
հատկության, ջերմության, քանակի մասին բառ  
ամիսների, ամենահորդ ջրերի կամ շորանալու  
թվականները և այլն: Հանգանակ մասին լրացու-  
ցիչ աեղեկություններ պետք ե տալ հանքների պա-  
րունակության աստիճանի, համի, բարեխառնու-  
թյան մասին, յեթե հնարատվոր ե՝ կատարել վորո-  
կական և քանակական վերլուծությունը:

Զքհսոների ջրերի մակերեսը յթի տառանուանեցն և աղբյուրների ուժգնությունը հետազոտելիս ստացած տվյալները պեսք և համազրել ողերութարանական տվյալների հետ և այդ համա-

որության միջոցին աշքի առաջ ունենալ վոչ միայն  
ակզումների քանակը, այլև մթնոլորտի ճնշումը,  
և ոգի բարեխասնությունը<sup>\*</sup>:

Վերը ասածներիցս պարզ է թե վարչափ կարեար և տեղական դավառագետների մասնակցությունը յԱրկի ջրային միջոցների ուսումնասիրության գործում : Այս հանգամանքը վազուց զիտակցվել և և կամենալով գյուրացնել տեղեկությունների հավաքումը տեղերում՝ Պետական Զքարտանական Ինստիտուտը մշակել է համապատասխան անկետաներ : Ի հարկե՝ անկետաները մշակված են համամիտենական մասշտաբով և մեր տեղական պայմանների մեջ պատասխան չեն զանի որինակ՝ այսպիսի հարցեր—գետային նավագնացությունը, սասցածարգերի ընթացքը, —սակայն զաշպիսի խանգարի այդ անկետաները զործագրել են մեր մեջ : Անկետաների փափոխությունը ցանկալի չել, վորովհետեւ դա կը գժվարացներ տեղեկությունների միաձև մշակումը համամիտենական մասշտաբով . այդ և պատճառը, վոր անկետաները սոորե բերվում են անփոփոխ :

Անկետաներն աշքի առաջ ունեն :

1. Գետերի գարնանային և աշնանային ուժիմը,

\* ) Ստորյարկը ջրերի մասին վերը գրածները վերցած են Տ. Ա. Սоветօք-ի հոգվածից՝ «Կաк изучать воду своего края», («Կակ նշումները կազմուելու մեջ»).

2. Ջմեռային ուժիմը,

3. Գարնանային վարարման ուժիմը և ,

4. Մակերեսութիւն պատահական լուրջանալլը անձրիներից (անձրիւահեղեղներ) .

5. Ստորյարկը ջրեր :

Այս անկետաների լրացումը չի պահանջում վոչ մասնակիան նախազարսաստություն, վոչ և մեծ աշխատանք :

Անկետաները լցնելուց հետո պետք է ուղղել վաստակ Յերեան, ողերինուրաբանական կայանի հասցեով—մակագրելով ծրաբի վրա՝ «Անվիար—Ես ուլադուկայան իրավունք ունի փոստացին անվճար փոխադրությունների» .

## ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐ

Ստորև բերված հարցաթերթերը, վոր պիտի  
ուղարկվեն Հայաստանի Զրգարչությանը—ՅԵՐԵ-  
ՎԱՆ. Ողերեւութաբանական կայան—ՄԱԿԴԱՐ Եօ-  
պատու—պիտի սկսվեն նախ հետեւյալ տեղեկու-  
թյուններով (I—IV) :

Հարցաթերթը լրացնելու ժամանակը (որը,  
ամիսը, թիվը) .

Գետի, գետակի, լճի, ժամանակավոր վասակի  
անունը (յեթե անունը փոխված է, ցույց տալ նոր  
և հին անունները) .

Աւը և թափվում.

Դիտողության աեղը.

Գավառ, գավառակ.

Տեղը վորոշելու համար անհրաժեշտ և ցույց  
տալ թե ինչ հետաքրության վրա յե գտնվում ժո-  
տակա քաղաքից և մեծ դյուզից և ինչ ուղղու-  
թյամբ՝ արեւելք, արեմուտք, հարավ, հյուսիս .

Դիտողի անունը, հայրանունը, ազգանունը .

Տեղեկություն ավողի փոստային ստույգ հաս-  
ցեն :

1. ԳԵՏԵՐԻ..... ԹՎԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ
2. Աջնանը գետերը վերջնականացեն յերբ սա-  
ռեցին :
3. Աջնանը ձյունը նստեց ու մնաց սառած թե՝  
հալած գետնի վրա :
4. Յեթե ձյունը յեկալ սառած գետնի վրա և  
յեթե դաք այդ ժամանակ փորձում եյթէ  
գետինը փորել, ապա ինչ խորությամբ եր  
գետինը սառած :
5. Զմեռվա ընթացքում ձեր գետի մակերեսի  
բարձրությունը ընդհանուր առմամբ (համե-  
մատած նբաւ սովորական ձմեռային մակերե-  
սի բարձրության հետ) ինչպես եր—չափազանց  
բարձր, բարձր, սովորական, ցածր, չափա-  
զանց ցածր :
6. Զմեռվա ընթացքում ձեր գետի մակերեսի  
բարձրության մեջ տատանումներ յեղան ար-  
դյոք և յերբ :
7. Յեթե ջրի մակերեսի բարձրության մեջ տա-  
տանումներ նկատվել են, ապա ընդհանուր  
զծերով նկարագրեցնեք թե ձեր գետի մակե-  
րեսը ձմռան ընթացքում ամսեամսիս ինչ աս-  
տիճանական փոփոխություններ ե կրել :
8. Յեթե այդ ջրի մակերեսի բարձրության կրած  
փոփոխությունները վորեե բանով տարբերվել  
են այլ ձմռաների սովորական փոփոխու-  
թյուններից, ապա ցույց տվեք թե վորն ե այդ  
տարբերությունը :
9. Զմռան վոր ամսին նկատվեց ջրի ամենացածր  
դրությունը :

9. Զմունն վոր ամսին նկատվեց ձեր զետի ձմեռային ամենաբարձր մակերեսը :
10. Զմեռը գետի ջուրն զգալիորեն բարձրացավ արդյոք և հատկապես յերբ :
11. Ի՞նչն եր ջրի արդյուն բարձրանալու պատճառը՝ վերեից ջրի տոտոսնալը (ձյան հարվերաց, անձրեներից) թե ներքեռում սառուցի կուտակվերաց և ջրի բնթացքը կազերաց :
12. Զմեռվա բնթացքում տաք որեր (օտեռնը) յեղան արդյոք բայ հնարավորության ցույց տվեք թե վոր ամիսներին :
13. Զեր գետի միապազար սասցածածկի տակ լինում և արդյոք փուխր սառուց :
14. Յեթե այդպիսի փուխր սառուց բնդ հանրապես լինում և, ապա այս տարի ձմեռը կար արդյոք, և յեթե կար, բայ հնարավորության ցույց տվեք թե վոր ամիսներին :
15. Յեթե աշնանից գետենը սառել եր, ապա ձյան տակ չհայեց արդյոք :
16. Արդյոք չեւ պատահել, վոր ձմեռվա մեջ ձյունն ամրագնովին հարվեր, և յեթե պատահել և, վոր ամսում :
17. Ձյան առասության առանկետից այդ ձմեռն ինչպես եր՝ չափազանց չատ ձյունստ եր, չատ ձյունստ եր, սովորական, սակավ, թե չափազանց սակավ ձյունստ եր :
18. Նախ քան հալքն ընկնելը ձյան չերտը մոտավորեն ինչ հաստության եր :
19. Ձյան չերտի այդ հաստությունը, համեմատած այլ տարբեների այլ ժամանակվա ձյան

- չերտի սովորական հաստության հետ, ինչպես եր՝ չափազանց չատ հաստ, չատ հաստ սովորական, թիւ թե չատ թիւ :
  20. Հալքից առաջ ձյունն արդյոք սովորական եր, թե ամելի թեթե (փափուկ) կամ սպիտի ծանրը (խստ, ամառը) և քան լինում և առհասարակ այդ ժամանակի:
  21. Յերբ սկսվեց բնդ հանրության հալքը :
  22. Զրերի վարարման սկզբում հոգն արդյոք ամրոգնապես հալված եր (որինակ, կարելի յեր բահանգ փարել) թե բնդ հակառակը, սառած եր, կամ վերջապես յերեսը հալված եր, իսկ տակը սառած եր :
  23. Զմունն վերջին ձեր գետի ջուրն ինչ բարձրության եր, այդ ժամանակվա սովորականից բարձր եր, սովորական, թե սովորականից ցածը :
  24. Ել ինչ սպառակար կհամարելիք ավելացնել :  
Սույն հարցաթերթը պետք է լրացնել և ուղարկել վուշ ուշ, քան գետերի գարնանային բացումից մի շարաթ անց :
- ## II. ԳԵՏԵՐԻ..... ԹՎԻ ԳԱՐՆԱՍՑԻՆ ՀՈՐԴԱՑՄԱՆ ՌԵԺԻՄԸ
1. Յերբ և սկսվել հորդացումը, (ցույց տվեք ամիսը և թիվը, յերբ սկսվել և նկատելի բարձրանալ) :
  2. Գարնանը յերբ և ընդհատվել ձիով հաղորդակցությունը գետի վրայով :

3. Գարնան սասցահոսը յերբ և տեղի ունեցել, սկզբը և վերջը:
4. Յեթե սասցահոս չէ յեղել և սասուցը հալվել և տեղն ու տեղը, ապա այդ յերբ և յեղել:
5. Բացումը (գետի) յեղել և շուա, ուշ, սովորական:
6. Գարնան սասցահոսի ժամանակ սասցի կուտակում յեղել ե:
7. Յեթե սասցի կուտակում յեղել և, ապա մանրամասն նկարագրեցեք յերբ և սկալել, գետի վոր մասաւմ (վորագան աելում, գետի սուր ծնկի մոտ, գիտողության վայրից վերել թե ներքեւ): Վորքան մեծ եր սասցի կուտակումը, յերկար մնաց արդյոք, կուտակումից վերել և ներքեւ ինչ վոտիսխություններ և առաջ բերել և վորեւ վնաս պատճառել և արդյոք:
8. Յերբ և ջուրը դուրս յեկել ցածր ափերից (սկսել և վողաղել ձամբը):
9. Յերբ և ջուրը դուրս յեկել բարձր հիմնական ափերից:
10. Վոր ամսին և վոր թվին և չարաթվա վոր որը գետի մակերեսը հասել և ամենաբարձր աստիճանին:
11. Ինչքան ժամանակ և ջուրը մնացել ամենաբարձր աստիճանի վրա:
12. Յերբ և ջուրը մտել, բարձր, ցածր, ափերի մեջ:
13. Քանի տարվա հորդացումներ եք հիշում ձեր կողմերում:

14. Ձեր կարծիքով այդ թվի հորդացման ժամանակ ջուրը համեմատած սովորական հորդացումների հետ ինչքան բարձր եր, այսինքն հասել եր չափազանց բարձրության, բարձր եր, սովորական եր, ցածր թե չափազանց ցածր եր:
15. Գրեք ձերունիների կարծիքն այդ թվի հորդացման մասին, յեթե այդ կարծիքը ձեզ յավ հայտնի յե:
16. Յեթե դուք ջրաչափական ձող ունեք, ապա րացի 15-րդ կետին պատասխաննելուց, ցույց տվեք այդ թվի հորդացման ամենաբարձր աստիճանը ջրաչափական ձողով (չմոռանաք զրել թե ինչ չափերով և ինչ կետից և հաշված):
17. Յեթե մոտակայքում մշտական կետ (սեպեր) կա, ապա տեղեկացրեք՝ այդ թվի ամենաբարձր ջուրը սեպերից բարձր եր թե ցածր (ցանկալի յե սեպերի և ջրաչափական ձողի նկարը և նրանց տեղադրության նկարովությունը):
18. Ջրի բարձրությունը սովորականից վորքան եր բարձր (այն բարձրությունից, վոր հաստատվում և հորդացումն անցնելուց հետո յերկար ժամանակով):
19. Հաղորդեցեք թե ինչ աչքի ընկնող տեղերի (տուն, փողոց, շենքեր) յե հասել ջուրը ձեր բնակավայրում թե այդ և թե ամենաբարձր հորդացման ժամանակ:

20. Յուց ավեք—չըջակա ինչ գյուղեր, ապաններ, խորհրդային տնտեսություններ, զործարաններ, ջրաղացներ, ելեքտրակայաններ են հեղեղի յինթարկել այդ թվի դաշնանր և վոր գետից կամ լճից (յուց ավեք թե նշած տեղերը ձեր բնակավայրից վոր կողմն են գտնվում—արեւելք, արեմուտք, հարավ, հյուսիս) :
21. Վորքան ժամանակ և տեղել այդ թվի հորդացումը սովորականի հետ համեմատած՝—սովորականից յերկար, սովորական, սովորականից կարճ :
22. Ելրը և ձյունը հարվել, բաց տեղերում, անտառներում :
23. Զյան հալքը միահամուս եր, զանգաղ թե միջակ, յեթէ հալքը մերթ միահամուս եր և մերթ զանգաղ, ապա մանրամասն նկարագրեցեք թե ինչպես եր տեղի ունենում :
24. Ինչ չափով և ջուրը ծծվել հողի մեջ այդ գարնան հորդացման ժամանակ սովորականի հետ համեմատած՝—չափ ուժեղ, ուժեղ, սովորական, քիչ, չափ քիչ :
25. Գարնանային հորդացման ժամանակ անձրեվայությունը սովորականի հետ համեմատած վորքան եր՝—չափազանց մեծ, մեծ, սովորական, փոքր, թե բոլորովին անձրեվի յեկել :
26. Հորդացումը քայլայումներ և վնասումներ չեն պատճառել արդյոք, և յեթէ այս, ապա ինչպիսի:

27. Հազորդեցեք ձեր ունեցած հաստատուն ուեղեկությունները նախկին մեծ կամ փոքր հորդացումների մասին, յեթէ գըանց մասին նախորդ տարիներին չեք հազորդել: Յերր (տարի, թիվ) և նկատվել չափազանց մեծ, կամ չափազանց փոքր հորդացում, և ինչքան եր ջուրը բարձրացել այդ հորդացման ժամանակի:
28. Գրեցեք այսեղ այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ եք համարում լրացուցիչ կերպով հաղորդել, կամ ինչ վոր չի մտել նախորդ յերեաների մեջ:
- Այս հարցաթերթը լրացնել և ուղարկել գարնանային հորդացումը մերջանալուց անմիջապես հետո:
- Խնդրվում ե գետերի, գետակների, լճերի և յամանակալոր վտակների ափերին, վորտեղ հրանարավոր ե, մեկ կամ մի քանի տեղերում հաստատուն նշան դնել, այսինքն խաղել այն ամենաբարձր մակերեսը, վորին հասել և ջուրն այդ թվի հորդացման ժամանակի: Խաղի մոտ պետք ե նշանակել այն ասրեթիվը, յեր տեղի յեւ ունեցել հորդացումը: Ավելի լավ ե այդ խաղն անել փորելով փորեն հասարակական չենքի, յեկեղեցիների, կամուրջների կամ քարափների վրա, և յեթէ նսարավոր ե՝ խաղի վրա նաև մի մեծ մեխի խփել:
- Այս բոլորը կատարելուց հետո նկարագրեցեք վորքան կարելի յեւ ճիշտ և պարզ կերպով

այն տեղը և չենքը, վորի վրա խաղ և արգած և  
ցույց տվեք այն նշանները, վորոնց ոգնությամբ  
կարելի կլինի խաղը դանել:

## III ԳԵՏԵՐԻ..... ԹՎԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՅԵՎ ԱՇ- ՆԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ

1. ՅԵ՞րբ գետը հասավ իր սովորական բարձրու-  
թյանը, այսինքն՝ այն բարձրությանը,  
վորը հաստատվում է ջրի հորդացումից հետո  
յերկար ժամանակով:
2. Բարձրության նյութ ժամկետը սովորականից  
չուտ եր, սովորական թե սովորականից ուշ:
3. Ամառը ձեր գետի ջրի բարձրությունը հա-  
մեմատած նրա սովորական ամառային բար-  
ձրության հետ ինչպես եր, — չափազանց  
բարձր, բարձր, սովորական, սովորականից  
ցածր, չափազանց ցածր:
4. Աշնանը ջրի բարձրությունն ինչպես եր, հա-  
մեմատած նրա աշնանային սովորական բար-  
ձրության հետ՝ — չափազանց բարձր, բարձր,  
սովորական, ցածր, չափազանց ցածր:
5. Նկատելի տարբերություն չի յեղել արդյոք  
գետի ջրի բարձրության մեջ ամառվա 1 և II  
կեսերում:
6. Քնությանուր գծերով նկարագրեցեք, թե ինչ-  
պես ամսե-ամիս տատիճանաբար այդ ամառը  
և աշնանը փոխված եր ձեր գետի ջրի բար-  
ձրությունը:
7. Սյու թվի ամսուր և աշնանը ձեր գետի ամս-  
նացած մակերեսը յերբ և յեղել (ցույց տվեք

- վոր ամսին և ամսի սկզբին, կեսին թե  
վերջին):
8. Զեր գետի այս տարվա ամառային ամենա-  
ցածր մակերեսը սովորական ամառային մա-  
կերեսից բարձր եր թե ցածր, թե նույն եր  
ինչպես միշտ:
9. Ինչքան տեղեց ձեր գետի ամենացածր մակե-  
րեսը՝ — սովորականից յերկար, սովորական  
թե սովորականից կարճ:
10. Մասավորապես ինչքան ժամանակ տեղ  
արդ ամենացածր մակերեսը:
11. Քնությանբարպես ինչպիսի ամսուր եր այդ ա-  
մառը՝ — չափազանց անձրեային, սովորակա-  
նից ավելի անձրեային, սովորական, քիչ  
անձրեային, չափ չորսային:
12. Նկատելի տարբերություն չկար արդյոք  
ամսուր 1 և II կեսերի անձրեների տու-  
առության մեջ:
13. Քնությանբարպես այդ աշունն ինչպես եր, չա-  
փազանց անձրեային, սովորականից ավելի  
անձրեային, սովորական, քիչ անձրեային,  
չափ չորսային:
14. Յեթի զանազան ամիսներում անձրեների ա-  
ստառությունը տարբար եր, նկարագրեցեք  
թե ինչպես եյին անձրեները փոփոխվում  
արդ ամսուր և աշնան ընթացքում ամսե-  
ամիս:
15. Դժվարություն կրել եք արդյոք այդ ամսուր  
և աշնանը ջրի սակավության պատճառով,  
ինչպիսի դժվարություն եք կրել (նավագը-

- հացության, ջրաղացների, գոսոգման) և  
վորքան ժամանակ:
16. Այդ ամառը և աշնանը ձեր գետի ջուրը բար-  
ձրացել եր արդյոք և հատկապես յերբ (յե-  
թե այդպիսի գեղքեր յեղել են, նկարաղե-  
ցեք՝ «Անձրեներից գետերի հորդացման»  
հասուեկ հարցաթերթերի վրա):
  17. Այդ ամառը և աշնանը հեղեղներ յեղել են  
արդյոք (կամուրջներ, ջրաղացներ, խոռ և  
այլն քել և ջուրը), և հատկապես յերբ:
  18. Ինչ բարձրության եր ձեր գետի ջուրը այդ  
աշնանը սառցակալվելուց առաջ, համեմո-  
տած նույն ժամանակի սովորական բար-  
ձրության հետ՝—չափազանց բարձր, բարձր,  
սովորական, սովորականից ցածր, չափա-  
զանց ցածր:
  19. Յերբ սկսվեց այդ աշնան սառցակալումը:
  20. Գետը վերջնականապես յերբ սառեց:
  21. Այդ աշնանը գետի սառչելուց հետո նորից  
յերբ և սկսվել սառցահոսը, վորից հետո  
վերջնականապես սառել և: Ասու նաև  
ցույց տվեք գետի սառչին և յերկրորդ սառ-  
չելու ժամանակիր:
  22. Այդ աշնանը գետի սառչելն ինչպես եր, —չա-  
փազանց վաղ, վաղ, սովորական, ուշ չա-  
փազանց ուշ:
  23. Աշնան սառցահոսի և վերջնականապես սառ-  
չելու ժամանակ գետի վորոշ տեղերում սառ-  
ցի կուտակում չի յեղել արդյոք:

24. Յեթե սառցի կուտակում յեղել է, հայել-  
վածի մեջ մանրամասն նկարագրեցեք, թե  
յերբ և սկսվել, գետի վոր մասում (գետի վո-  
րորման տեղում, սուր ծնկի մոտ և այլն),  
վորքան մեծ եր կուտակումը, վորքան ժա-  
մանակ տեղ, ինչից եր գոյացել (մակերե-  
սով հոսով սառուցից, թե հոնը փակվել եր  
հետեւյց բարձրացած սառուցով): Ինչ վո-  
րություններ և առաջացել ջրի մակերեսի  
բարձրության մեջ սառուցի կուտակումից  
վերև և ներքի և վորեւ վիստ հասցրել և  
արդյոք:
25. Նկատվել և արդյոք ջրի բարձրանալը կամ  
ցածրանալը ձեր գետի սառչելու ժամանակ,  
և յեթե նկատվել և, ինչը հատկապես և ինչ  
չափով: Յեթե հնարավոր ե՝ մանրամասն  
նկարագրեցեք:
26. Աշնան սառչելու ժամանակ հողն ինչ չափով  
եր ջուր ձեր ներսը,—չատ ուժեղ, ուժեղ,  
ժիջակ, փոքր, թե հողը չոր եր մնացել:  
Հարցաթերթը լրացնել և ուղարկել գեկտեմ-  
րի 15-ից վոչ ուշ:

#### IV. ԱՆՁՐԵՎՆԵՐԻՑ ԶՐԻ ՀՈՐԴԱՆԱԼԸ

1. Ինչ պատճառներից են ջրերը սաստիկ բար-  
ձրացել, վորի մասին այժմ գուք տեղեկացնում  
եք այս թերթիկով (ուժեղ ասրափից, յերկա-  
րատե անձրեներից):
2. Յերբ և սկսվել հորդացումը, գրեք տարին,  
մասաթիվը և յեթե հնարավոր և նաև ժամը,

- յերբ ջուրն սկսեց նկատելի կերպով բարձրանալ:
3. Յերբ ջուրն սկսեց ճամերը վազողիլ:
4. Այդ հորդացման ժամանակ արդյոք ջուրը դուրս յեկել էր իր բարձր, հիմնական ափերից և հատկապես յերբ (ամիս, թիվ, ժամ):
5. Ջուրը յերբ (ամիս, թիվ, ժամ, վեշերը թե ցերեկը) հասավ ամենաբարձր աստիճանին:
6. Ինչքան ժամանակ ջուրը մնաց ամենաբարձր աստիճանին:
7. Յերբ իջավ իր բարձր ափերի մեջ:
8. Յերբ իջավ իր ցածր ափերի մեջ:
9. Նկարագրած հորդացումը ձեր կողմերի բարնանային սովորական հորդացումից բարձր էր, թե ցածր:
10. Յեթե ջրաշափական ձող ունեք, հազորդեցիք թե հորդացման ժամանակ ջրի ամենաբարձր դրությունը ձողի զերոյից վարքան էր վերի (չմոռանաք ցույց տալ թե ինչ չտփով եք շափել):
11. Յեթե մոտակայքում մշտական սեպեր (կետ) կա, հազորդեցիք թե հորդացման ժամանակ ջրի ամենաբարձր աստիճանը այսպիսից բարձր էր թե ցածր:
12. Նկարագրած հորդացման ամենաբարձր աստիճանը գետի սովորական մակերեսից վորքան էր բարձր:
13. Հազորդեցիք, թե գետի ջուրն ամենաբարձր ժամանակ ձեր բնակավայրում աչքի ընկնող ինչ տեղերի (առն, փողոց, շենք) յեր հասել:

14. Ջրի հորդացման ժամանակ ըլչուկա ինչ դրույթի և այլ բնակավայրեր յենթարկվեցին հեղեղման և վորով գետից:
15. Ցույց տվեք, յերբ սկսվեցին և յերբ վերջան այն անձրսները, վորից տուաջացել եր հորդացումը:
16. Անձրսնից տուաջ հողն ինչպիս եր, —չոր եր թե խոնավ:
17. Վորքան էր հողը ջուր ծծել մինչև հորդացման վերջանալը, —չափազանց չատ, չատ, միջակ, սակավ, թե գետինը չոր էր միացել:
18. Այս հարցաթերթում ձեր նկարագրած հորդացումից ավերածություններ և վնասներ չեղանակությունը և յերբ յեղան, ապա վորտեղ և հատկապես ինչպիսի:
19. Զեր գետում վորքան հաճախ են լինում այդպիսի զգալի հորդացումներ, ինչպիսին ձեր նկարագրածն և, —ամեն արբի թե ավելի սակավ (քանի արբին մեկ անդամ):

## V. ԱՍՈՐՅԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ

1. Դիտողության տեղը՝ զավառ, զավառակ, դիտողության վայրը, քանի տնից և բաղկացած, բնակիչների թիվը. մոտակա գետի անունը:
2. Տեղի բնույթը (հարթ թե շափազանց կալքաված (ձորագաշտ). հարթավայր, բլուս թե լեռնոտ, տափառոտ, անտառոտ թե ճահճոտ և այլն):

ԷԵԴՀԱՆՈՒԹՅ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏՎՅԱԼ ՎԱՅՐԻ  
ԶԲՀՈՐՆԵՐԻ ՅԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

- (ՅԵԹԵ ՀՆԱՐԱՎՈՐ և ներկայացրեք ջրհորների  
և աղբյուրների դասավորման պլանը) :
3. Տվյալ վայրի ջրհորների ընդհանուր թիվը,  
վորոնցից հասարակական են . . . . և մասնա-  
վոր . . .
  4. Քանի ջրհոր՝ յածրում . . . , լանջին . . . , սարի  
վրա . . .
  5. Ջրհորի չուրը հողի վոր չերտից եւ (ավազի,  
ավազու կավի, կոտիձի, լեփուկի, ավա-  
զաքարի, կրաքարի, զրանիտի և այլն),  
յածրի . . . լանջի . . . սարի վրա (յուրաքան-  
չուր ջրհորի ժամանի գրել առանձին) :
  6. Ջրհորի ջրի վորակը (անգույն թե ներկված,  
սպարգ թե միշտ պղասոր, հոտ ունի թե վոչ,  
անալի, դառը, աղի, փափուկ (ոճառը միջին  
լավ և փրփրում) թե կոշտ (ոճառը չի փըր-  
փրում), յածրում . . . . , լանջին . . . . , սարի  
վրա . . . .
  8. Տարվա վոր ամիսներին և ամենից քիչ չուր  
լինում յածրի, լանջի և սարի վրայի ջրհ-  
որների մեջ:
  8. Տարվա վոր ամիսներին և ամենից քիչ չուր  
լինում յածրի, լանջի և սարի վրայի ջրհ-  
որներում:
  9. Զի նկատվել արդյոք ջրհորի ջրի բոլորովին  
յամաքելը, վոր թիվն, տարվա վոր ժամանակ  
և վոր ջրհորում՝ յածրի, լանջի, լեռան վրա:

10. Տեղեկություններ չկան արդյոք ջրհորների  
ջրի առանձնապես բարձրանալու մասին, վոր  
թիվն, վոր ամսում, և վոր ջրհորում և նո-  
կատվել՝ յածրի, լանջի, լեռան վրա:
11. Տեղեկություններ չկան արդյոք ջրհորների  
ջրի առանձնապես յածրանալու կամ բոլո-  
րովին յամաքելու մասին, վոր թիվն, վոր  
ամսում և վոր ջրհորում և նկատվել՝ յածրի,  
լանջի, լեռան վրա:
12. Շրջակայքում աղբյուրներ կան արդյոք, և  
վարտեղ են գտնվում (գետի, ձորի, հովտի  
կամ այլ տեղի անունը) :
13. Աղբյուրների բնույթը (շափազանց հա-  
խուսն, հախուսն, միջակ, թույլ, հազիվ  
նկատելի, միմեանց ժող են թե հեռու) :  
(ընդգծել):
14. Աղբյուրի ջրի վորակ՝ պարզ, պղասոր, հոտ  
ունի թե վոչ, քաղցրահամ, աղի, միշտ  
տաք թե սոսոր, փափուկ թե կոշտ:
15. Սովորաբար սարվա վոր ամիսներին են աղ-  
բյուրները շատ ջուր տալիս:
16. Սովորաբար սարվա վոր ամիսներին և աղ-  
բյուրի ջուրը ամենից քիչ լինում:
17. Տեղեկություններ չկան արդյոք աղբյուր-  
ների ջրի առանձնապես առատության մա-  
սին, վոր թիվն և վոր ամիսներին և այլ  
նկատվել:
18. Տեղեկություններ չկան արդյոք աղբյուր-  
ների ջրի յամազանց պակասելու կամ աղ-

բյուրների վակվելու մասին, վոր թվին,  
և վոր ամսին և այդ նկատի և յերբ և կըր-  
կին բացվել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋՄԱՆ ԶՐՀԱՐՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ . . . . . ԹՎԻՆ

(ՄՆՀՐԱԺԵՀՄ և տեղեկություն տալ յերեք  
վորոշ ջրհորների մասին, յեթե այլպիսիները  
կանցածը ըստ, լանջին, սարի վրա: Յեթե տեղը  
հարթ և, կարելի յի տեղեկություն տալ ջրհոր-  
ներից մեկի մասին: Գիտակության համար ցան-  
կալի յի այնպիսի ջրհոր ընտրել, վորը հեռու յի  
զետի ափից, ձորից, լճից, և այլն: Հետեւայ  
տարիներում գիտողությանները պիտի կատար-  
վեն այլ նույն ջրհորների վերաբերյալ:

19. Վոր ջրհորներում (ցածրում, լանջին, սարի  
վրա) ջուրն առանձնապես բարձրացավ այդ  
տարի:

20. Վոր ջրհորներում (ցածրում, լանջին, սարի  
վրա) ջուրն առանձնապես քիչ է յեղել:

ՅԱՅՐ ԶՐՀԱՐՆ

(Եռոյնը նաև ջրհորը լանջին, ջրհորը սարի վրա)  
21. Ջրհորի անունը կամ տիրոջ ազգանունը:  
22. Ջրհորի հեռավորությունը ամենամոտ զե-  
տից, լճից, ձահճից, ազգյուրից և այլն:  
23. Ջրհորի խորությունը պոսոնդից մինչեւ հո-  
տակը:  
24. Ջրհորի խորությունը պոսոնդից մինչեւ  
ջուրը:

- Ծանրություն—Յանկալի յի նշանակել  
թե յերբ և չափվել (որը):
25. Ջրհորի պոսոնդի բարձրությունը (հաշված  
պոսոնդի վերին յեղբեց մինչեւ գետին):
26. Ջրհորը փորելիս հողի ինչպիսի և ինչ հաս-  
տության շերտեր են հանդիպել:
27. Ջուրը հողի վոր շերտից և հոսում (ավազի,  
ավազան կավի, կավիճի, ավազաքարի,  
կրաքարի թե այլ տեսակի):
28. Հարկավոր և արդյոք այդ ջրհորը մաքրել և  
յերբ և մաքրված:
29. Տարվա վոր յեղանակին և քանի դույլ ջուր  
են հանել ջրհորից մինչեւ հատակը զատար-  
կելու համար (որինակ ջրհորը մաքրելու  
ժամանակ և այլն):
30. Ջրհորի ջրի հատկությունը (անգույն թե  
ներկված, հստ ունի թե վոչ, քաղցրահամ,  
դառը, աղի, կոչտ թե փափուկ):
31. Վոր ամսին և վոր թվին և նկատվել ջրհորի  
ջրի ամենաբարձր գիրքը այդ տարի:
32. Այդ տարի ջրհորի ջուրն իր ամենաբարձր  
գրության ժամանակ վորքան բարձրացավ  
(շատ բարձր, բարձր, միջակ, սովորական,  
սովորականից ցածր, կամ բոլորովին չբար-  
ձրացավ):
33. Այդ տարի ջրհորի ջրի ամենացածր գրու-  
թյունը վոր ամսին և թվին նկատվեց:
34. Այդ տարի ջրհորի ջրի ամենացածր գրու-  
թյան ժամանակ ջուրը վորքան իջավ (շատ

ցած, սովորական (միջակ), բիշ իջափ թե բոլորովին չիջամ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԳԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
.....ԹՎԻՆ

35. Վոր տմսին և վոր թվին և առանձնապես  
չառ ջուր նկատել աղբյուրների մեջ այդ  
տարի:

36. Այդ ժամանակ աղբյուրների ջուրը քանի  
անգամ եր ավելացել սովորականի հետ հա-  
մամատած (մեկ ու կես, յերկու, յերեք ան-  
գամ թե ավել):

37. Այդ տարի վոր տմսին և վոր թվին եր ջուրն  
առանձնապես քիչ աղբյուրներում:

38. Այդ ժամանակ աղբյուրների ջրի քանակը  
սովորականի հետ համեմատած վորքան եր  
պակասել (մեկ ու կես, յերկու, յերեք թե  
ավել անգամ):

39. Այդ տարի աղբյուրները յերբ բուրբովին  
ցածրագեցին:

40. Ել ինչ անհարաժեշտ կհամարելիք ավելացնել:

Դիտողի համար Ազգանունը, անունը,  
Հայրանունը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## Гидрологический Институт – Государственный Гидрологический Институт-ГИДРО (Ленинград).

1. Инструкция для устройства створных сечений.
  2. Инструкция для выбора места под водомерные посты.
  3. Инструкция для устройства простейших типов водомерных постов.
  4. Инструкция для наблюдения за горизонтом воды.
  5. Инструкция для измерения расхода воды вертушкою.
  6. Инструкция для измерения расхода воды поплавками.

Институтъ ѿзи ѿрдннцнкъръ олъаркъръ  
Р҃ттшкъръ զվшшшкъннкъръ дрѣшшръ:

*Вашъ*

  7. ГЛУШКОВ П. Т. «Наблюдайте ручьи и реки», Изд. Гидролог. Ин-та.
  8. ЛЕБЕДЕВ В. Н. «Зачем нужны метки высоких вод и как их устраивать» Изд. Гидролог. Ин-та.
  9. СОВЕТОВ С. А. „Как изучать воды края“ —*бттвхдръ* «Как изучать свой край» *фп-цишшдтиръ* *мѣдъ*. Изд. Брокгауз—Ефрон—Ленинград.
  10. ТРУФАНОВ А. А. «Речная гидрология» Госизд. Москва
  11. КРУБЕР А. А. «Общее землеведение» ч. I. и II. Госиздат Москва.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . . .	3
Հայաստանի համառոտ ջրագրությունը . . . . .	5
Ինչով կարող են մասնակցել յերկրի ջրաչափության ուսումնասիրությանը քպակիցները ու գավառագիտական ընկերության անդամները . . . . .	8
Ինչպիս ուսումնասիրել գետերը . . . . .	9
Կանգնած ջրերը . . . . .	22
Ստորյերկրյա ջրերը . . . . .	24
<b>ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐ .</b>	
1. Գետերի ձմեռային ռեժիմը . . . . .	28
2. Գետերի գարնանային ռեժիմը . . . . .	31
3. Գետերի ամառային և աշնանային ռեժիմը	36
4. Անձրևներից ջրի հորդանալը . . . . .	39
5. Ստորյերկրյա ջրեր . . . . .	41
Գրականություն . . . . .	47

«Ազգային գրադարան»



NL0269333

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՆ

Խմբագրում ե և հետզհետե լույս ե ընծալիկու  
հետևյալ հետազոտական

ԾՐԱԳԻՔԻՐՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՀԱՆԳԻՐԸ

1. Յերկրաբանական (Փող. Տնտ. Խորունքի  
ձախոքով):

2. Հողագիտական:

3. Կլիմայաբանական (Հողժողկոմի ձախ-  
քով):

4. Ֆենոլոգիական (Հողժողկոմի ձախոքով):

6. Բուսաբանական:

8. Արդյունագործական (Փող. Տնտ. Խորհի  
ձախոքով):

9. Հասարակագիտական:

11. Մարդաչափական (Առժողկոմատի ձախ-  
քով):

Լ Ռ Ի Յ Ս Ե Ե Տ Ե Ա Ե Լ

7. Ա. Յ. Ժ. Փազովսկի. Տեղական բնության  
թանգարան: Գ. 20 կ.

10. Ա. Լիսիցյան և Յ. Բաբուրդյան  
Հնությունների ցուցակագրությունն ու նկա-  
րագրությունը: Գ.՝ 40 կ.

ՊԱՀԵՍՏԸ Յերեան, Կենտրոնական Գավառա-  
գիտական Բլուրու, Լուսապկոմատ.